



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ՆԱԽԱԳԱՀԻ 11.12.2014Թ. ԹԻՎ 1/1218Ա ՈՐՈՇՄԱՄԲ**

ՀԱՎԵԼՎԱԾ

ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 14

**ՇԱՀՈՒՅԹ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿ ԶՀԵՏԱՊՆԴՈՂ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՀԱԲԵԿԶՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍԱԿՈՐՈՒՄԸ**

ԵՐԵՎԱՆ 2014

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գլուխ 1. Կիրառելիության շրջանակը.....	3
Գլուխ 2. Ընդհանուր դրույթներ	3
Գլուխ 3. Ահաբեկչության ֆինանսավորման հնարավոր սխեմաների նկարագրությունը.....	5
Գլուխ 4. Եզրակացություններ	9



Գլուխ 1. Կիրառելիության շրջանակը¹

1. Սույն տիպաբանությամբ ներկայացվող մեթոդների և գործիքների սխեման կարող է վերաբերել «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաշվետվություն տրամադրող հետևյալ անձանց.
 - 1) Բանկեր, դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող անձինք.
 - 2) Նոտարներ.
 - 3) Անհատ ձեռնարկատեր հաշվապահներ և հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք.
 - 4) Աուդիտորական կազմակերպություններ և աուդիտորներ.
 - 5) Փաստաբաններ, իրավաբանական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերեր և իրավաբանական անձինք.
 - 6) Իրավաբանական անձանց գրանցող պետական մարմին (պետական ռեգիստր):

Գլուխ 2. Ընդհանուր դրույթներ

2. Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություն (ՇՍՆԶԿ) է համարվում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասով, «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով, «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով, «Բարեգործության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի այլ հոդվածներով և ՀՀ այլ օրենքներով ամրագրված սահմանումներին համապատասխանող և վերը նշված օրենքներին համապատասխան գործող կազմակերպությունը: ՇՍՆԶԿ-ն կարող է լինել ինչպես ՀՀ-ում, այնպես էլ այլ պետությունում գրանցված և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ տարածքում գործունեություն իրականացնող կազմակերպություն:
3. Ժամանակակից աշխարհում ՇՍՆԶԿ-ներն ահաբեկչության ֆինանսավորման² տարածված գործիքներից են: ՖԱԹՖ-ի 8-րդ հանձնարարականի համաձայն՝

¹ Սույն տիպաբանությունը մշակելիս օգտագործվել են ՖԱԹՖ-ի՝ ահաբեկչության ֆինանսավորման տիպաբանությունների վերաբերյալ 2003-2004թթ. և 2008թ. իրապարակված զեկույցները:

² Սույն տիպաբանության իմաստով, ահաբեկչության ֆինանսավորում է համարվում ՀՀ Քրեական օրենսգրքով սահմանված՝ գույքի ուղղակի կամ անուղղակի, ցանկացած եղանակով տրամադրումը կամ հավաքագրումը՝ գիտակցելով, որ այն ամբողջությամբ կամ մասամբ պետք է օգտագործվի կամ կարող է օգտագործվել ահաբեկչության կամ ՀՀ Քրեական օրենսգրքի 218-րդ հոդվածով նախատեսված արարքների կատարման համար կամ ահաբեկչական կազմակերպության կամ անհատ ահաբեկչի կողմից կամ ֆինանսական ծառայությունների մատուցումը՝ գիտակցելով, որ այդ

ՇՄՆՉԿ-ները համարվում են ահաբեկչության ֆինանսավորման տեսանկյունից առավել խոցելի, և երկրներից պահանջվում է ձեռնարկել միջոցառումներ, որոնք ուղղված են այդ հատվածը նմանատիպ չարաշահումներից պաշտպանելուն, ահաբեկիչների կամ ահաբեկչական կազմակերպությունների կողմից օգտագործվող կամ դրանց ակտիվորեն աջակցող ՇՄՆՉԿ-ների հայտնաբերմանը և արդյունավետ հակազդեցության միջոցների կիրառմանը: Հիմք ընդունելով «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» 3-րդ հոդվածի 21-րդ կետը՝ ՇՄՆՉԿ-ները համարվում են բարձր ռիսկի չափանիշներ:

4. ՇՄՆՉԿ-ների որոշակի բնութագրիչներ այդ կազմակերպություններն ահաբեկչության ֆինանսավորման ռիսկի տեսանկյունից դարձնում են առանձնահատուկ խոցելի: Մասնավորապես, այդ կազմակերպությունները.
 - 1) Հասարակության շրջանում վայելում են որոշակի վստահություն.
 - 2) Իրականացնում են պաշտոնապես հայտարարված հանրօգուտ նպատակներ հետապնդող գործունեություն.
 - 3) Գործում են վերահսկողության ու կարգավորման համեմատաբար մեղմ ռեժիմների ներքո.
 - 4) Բնութագրվում են միջոցների հավաքագրման աղբյուրների և շահառուների բազմաքանակությամբ.
 - 5) Ծավալում են աշխարհագրական ու սոցիալական լայն ընդգրկմամբ գործունեություն.
 - 6) Ներգրավված են հաճախ կանխիկ դրամով իրականացվող գործառնություններում:
5. Սույն տիպաբանությամբ նկարագրված սխեման ունի հետևյալ սուբյեկտային կազմը.
 - 1) Նվիրատու՝ ի դեմ ֆիզիկական կամ իրավաբանական անձի, որը ՇՄՆՉԿ-ին կատարում է ֆինանսական միջոցների միանգամյա կամ պարբերական փոխանցումներ, կամ որի սեփականությանը կամ տիրապետմանն է հանձնում այլ գույք³.

ծառայություններն ուղղված են ահաբեկչության կամ ՀՀ Քրեական օրենսգրքի 218-րդ հոդվածով նախատեսված արարքների կատարմանը, կամ դրանց արդյունքներն օգտագործվելու են ահաբեկչական կազմակերպության կամ անհատ ահաբեկիչի կողմից:

³ Սույն տիպաբանության իմաստով «գույք», այդ թվում՝ «ֆինանսական միջոցներ» կամ ուղղակի «միջոցներ» հասկացությունները ներառում են ՀՀ Քրեական օրենսգրքով սահմանված՝ ցանկացած տեսակի նյութական բարիքները, քաղաքացիական իրավունքի շարժական կամ անշարժ օբյեկտները, ներառյալ՝ ֆինանսական (դրամական) միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները, գույքային իրավունքները կամ շահերը հավաստող փաստաթղթերը կամ այլ

- 2) ՇՄՆԶԿ՝ ի դեմ դրա ղեկավարների, պաշտոնատար անձանց և/ կամ համապատասխան որոշումներ ընդունելու իրավասություն ունեցող առանցքային աշխատակիցների, ովքեր ունեն կազմակերպության ֆինանսական միջոցները և այլ գույքը տնօրինելու իրավասություն.
 - 3) Շահառու՝ ի դեմ ֆիզիկական կամ իրավաբանական անձի, որը ՇՄՆԶԿ-ից ստանում է ֆինանսական միջոցների միանգամյա կամ պարբերական փոխանցումներ կամ սեփականության կամ տիրապետման նպատակով հանձնվող այլ գույք:
6. Հարկ է նշել, որ նվիրատուի, ՇՄՆԶԿ-ի կամ շահառուի դերում կարող է հանդես գալ որևէ անհատ ահաբեկիչ, ահաբեկչական կազմակերպություն կամ նրանց հետ փոխկապակցված անձ (հետայսու՝ ահաբեկչության հետ կապված անձ):

Գլուխ 3. Ահաբեկչության ֆինանսավորման սխեմայի նկարագիրը

7. Սույն տիպաբանությամբ ներկայացված ահաբեկչության ֆինանսավորման սխեման գործարկվում է հնարավոր քայլերի հետևյալ հաջորդականությամբ.

1) Քայլ 1. Միջոցների հավաքագրում

Այս քայլով ՇՄՆԶԿ-ն միջոցներ է հավաքագրում ինչպես բարեխիղճ երրորդ անձ⁴ հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձ նվիրատուներից, այդ թվում՝ այլ ՇՄՆԶԿ-երից, այնպես էլ իրենց ինքնությունը կամ իրական գործունեությունը թաքցնող՝ ահաբեկչության հետ կապված անձանցից:

2) Քայլ 2. Միջոցների միախառնում ու օրինականացում

Այս քայլով ՇՄՆԶԿ-ն հավաքագրված միջոցները միախառնում է արտաքուստ կամ իրականում օրինական ծագմամբ այլ միջոցների հետ, ինչը կարող է կատարվել ֆինանսական միջոցների փոխանցման կամ գույքի հանձնման մեկ կամ մի քանի գործողությունների միջոցով:

3) Քայլ 3. Միջոցների տեղաբաշխում

Այս քայլով ՇՄՆԶԿ-ն տեղաբաշխում է արդեն միախառնված և օրինականացված միջոցները, դրանց մի մասն ուղղելով օրինական

միջոցները, գույքից ստացված կամ դրա նկատմամբ հաշվեգրվող տոկոսները, շահութաբաժինները կամ այլ եկամուտները, ինչպես նաև հարակից և արտոնագրային իրավունքները:


⁴ Սույն տիպաբանության իմաստով բարեխիղճ երրորդ անձ է համարվում ՀՀ Քրեական օրենսգրքով սահմանված այն անձը, որը գույքն այլ անձի հանձնելիս չգիտեր կամ չէր կարող իմանալ, որ այդ գույքն օգտագործվելու է կամ նախատեսվում է օգտագործել հանցավոր նպատակներով, ինչպես նաև այն անձը, որը գույքն այլ անձից ձեռք բերելիս չգիտեր կամ չէր կարող իմանալ, որ այդ գույքը ստացվել է հանցավոր ճանապարհով:

նպատակների իրագործմանը⁵, իսկ մյուս մասն ուղղակիորեն կամ միջնորդավորված եղանակով հանձնելով շահառուի դերում հանդես եկող՝ ահաբեկչության հետ կապված անձանց:

8. Ստորև ներկայացված՝ ՇՄՆԶԿ-ների մասնակցությամբ ահաբեկչության ֆինանսավորման սխեմայի տիպային օրինակում ենթադրվում է, որ ՇՄՆԶԿ-երի ղեկավարները, պաշտոնատար անձինք և/ կամ համապատասխան որոշումներ ընդունելու իրավասություն ունեցող առանցքային աշխատակիցներն անմիջականորեն ներգրավված են սխեմայի իրականացման մեջ և իրենց գործողություններով, այդ թվում՝ հրահանգներով, ցուցումներով ու կարգադրություններով ղեկավարում և ուղղորդում են սխեմայի իրականացման գործընթացը:
9. Ահաբեկչության ֆինանսավորման սխեմայի շրջանակներում տարբեր աղբյուրներից միջոցների հավաքագրումը, հավաքագրված միջոցների միախառնումն ու օրինականացումը և ահաբեկչության հետ կապված անձանց հանձնումը կարող է կատարվել մեկ կամ մի քանի ՇՄՆԶԿ-ների, այդ թվում՝ տվյալ երկրի տարածքում կամ դրանից դուրս գտնվող մասնաճյուղերի կամ ներկայացուցչությունների միջոցով: Ընդ որում, նշված մասնաճյուղերի կամ ներկայացուցչությունների մի մասը հաճախ գտնվում է թույլ վերահսկողությամբ երկրներում կամ չվերահսկվող տարածքներում:
10. Ահաբեկչության ֆինանսավորման սխեմայի իրականացման նպատակով կարող է օգտագործվել ՇՄՆԶԿ-ն, որը.
 - 1) Իրականում ստեղծվել է հանրօգուտ նպատակներով, սակայն իր կանոնադրական նպատակներին համապատասխան գործունեության իրականացմանը զուգահեռ օգտագործվում է ահաբեկչության ֆինանսավորման համար, կամ
 - 2) Գործում է որպես առերևույթ օրինական կազմակերպություն, սակայն իրականում նպատակ է հետապնդում հավաքագրված միջոցները ծառայեցնել ահաբեկչության ֆինանսավորմանը՝ դրանց վերաուղղորդումը քողարկելու կամ թաքցնելու միջոցով:
11. Ահաբեկչության ֆինանսավորմանն ուղղվող միջոցների ծագման աղբյուր կարող են հանդիսանալ ինչպես օրինական ճանապարհով ստացված

⁵ Օրինակ՝ մշակութային ծրագրերի, կրթական միջոցառումների, սոցիալական օժանդակության նախաձեռնությունների իրականացմանը, ինչը նպաստում է ՇՄՆԶԿ-ի գործունեության օրինականության վերաբերյալ պատրանքի ստեղծմանն ու ամրապնդմանը:

- եկամուտները, այնպես էլ հանցավոր գործունեության արդյունքում ստացված միջոցները:
12. Միջոցների **հավաքագրման փուլում** ՇՄՆԶԿ-ն կարող է նվիրատվությունների (այսինքն՝ առանց որոշակի նշանակության օգտագործելու պայմանի), նվիրաբերությունների (այսինքն՝ որոշակի նշանակությամբ օգտագործելու պայմանով) կամ անհատույց հատկացման այլ եղանակներով հավաքագրել միջոցներ.
 - 1) Բարեխիղճ նվիրատուներից, ովքեր կամենում կամ ակնկալում են, որ ՇՄՆԶԿ-ին հատկացվող միջոցները կօգտագործվեն բարեգործական, հանրօգուտ և այլ օրինական նպատակներով, կամ
 - 2) Անբարեխիղճ նվիրատուներից, ովքեր գիտեն կամ ենթադրում են, որ ՇՄՆԶԿ-ին հատկացվող միջոցները պետք է օգտագործվեն կամ կարող են օգտագործվել հանցավոր, այդ թվում՝ ահաբեկչության ֆինանսավորման նպատակներով:
 13. Հավաքագրված միջոցների **միախառնման ու օրինականացման փուլում** ՇՄՆԶԿ-ն կազմակերպում է իր կամ իր հետ փոխկապակցված անձանց բանկային հաշիվներով (ֆինանսական միջոցների դեպքում) կամ անվամբ (այլ գույքի դեպքում) միջոցների շրջանառությունն այնպես, որ թաքցվի մի կողմից՝ օրինական նպատակներով հավաքագրված միջոցները հանցավոր նպատակների իրագործմանը վերաուղղորդելու, մյուս կողմից՝ հանցավոր գործունեության արդյունքում ստացված միջոցները որպես օրինական ներկայացնելու հանգամանքը:
 14. Միախառնված և օրինականացված միջոցների **տեղաբաշխման փուլում** ՇՄՆԶԿ-ն կազմակերպում է այդ միջոցների հանձնումն ահաբեկչության հետ կապված անձանց, ինչը կարող է կատարվել վերջիններիս կամ նրանց լիազորված անձանց.
 - 1) Ֆինանսական միջոցների հանձնման դեպքում՝ բանկային հաշիվներին կամ անհաշիվ (դրամական փոխանցումների համակարգերի միջոցով) փոխանցում կատարելու կամ կանխիկ տրամադրելու միջոցով, կամ
 - 2) Այլ գույքի հանձնման դեպքում՝ համապատասխան գույքը սեփականությանը կամ տիրապետմանը կամ օգտագործման համար առձեռն հանձնելու միջոցով:
 15. Ահաբեկչության ֆինանսավորմանն ուղղված վերոշարադրյալ գործառնությունների սխեմատիկ պատկերը հետևյալն է.



Գլուխ 4. Եզրակացություններ

16. Ներկայացված սխեմայով և քայլերի հաջորդականությամբ կատարվող գործառնություններն իրենց մեջ պարունակում են միջոցների աղբյուրները, շարժը և շահառուներին թաքցնելու նպատակ:
17. Ահաբեկչության ֆինանսավորման հնարավոր սխեմաների առկայության վերաբերյալ եզրահանգման գալու նպատակով, սույն տիպաբանության Գլուխ 1-ում նշված անձինք պետք է ուշադրություն դարձնեն այդ սխեմաների հայտնաբերման տեսանկյունից էական համարվող այնպիսի բնութագրական հատկանիշների և հանգամանքների, ինչպիսիք են.
 - 1) ՇՄՆԶԿ-ի նվիրատուների, ղեկավարների, պաշտոնատար անձանց և/կամ համապատասխան որոշումներ ընդունելու իրավասություն ունեցող առանցքային աշխատակիցների, ինչպես նաև շահառուների՝ ահաբեկչության հետ կապված անձ (այդ թվում՝ ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերում ներառված) լինելու վերաբերյալ տեղեկատվության առկայությունը.
 - 2) ՇՄՆԶԿ-ի նվիրատուների, ղեկավարների, պաշտոնատար անձանց և/կամ համապատասխան որոշումներ ընդունելու իրավասություն ունեցող առանցքային աշխատակիցների, ինչպես նաև շահառուների՝ օտարերկրյա ռեզիդենտության հանգամանքը, հատկապես երբ նրանք բնակվում (գտնվում) կամ գործունեություն են ծավալում այնպիսի երկրներում/ տարածքներում, որտեղ ոչ արդյունավետ է գործում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համակարգը⁶, կամ որտեղ քաղաքական կայունության, անվտանգության և (կամ) հանցավորության կանխարգելման իրավիճակը բարվոք չէ.
 - 3) Տարբեր ՇՄՆԶԿ-ների՝ միևնույն կամ համանման տեղորոշիչ տվյալներ (գրանցման/ գործունեության հասցե, հեռախոսահամար, էլեկտրոնային փոստ և այլն) ունենալու հանգամանքը.
 - 4) Որևէ ֆիզիկական անձի՝ տարբեր ՇՄՆԶԿ-երի ղեկավար, պաշտոնատար անձ և/ կամ համապատասխան որոշումներ ընդունելու իրավասություն ունեցող առանցքային աշխատակից լինելու հանգամանքը.

⁶ Տես ՖԱԹՖ-ի հայտարարությունները (www.fatf-gafi.org) և «ՀԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ Ֆինանսական դիտարկումների կենտրոնի պաշտոնական ինտերնետային կայքէջը (www.cba.am/Ֆինանսական_դիտարկումների_կենտրոն):»

- 5) ՇՄՆԶԿ-ների մասնակցությամբ գործարքների իրականացումը, որոնք որևէ ակնհայտ տնտեսական կամ այլ իրավաչափ նպատակ չեն հետապնդում, կամ գործարքները (կոնտրագենտ(ներ)ը) չեն համապատասխանում կազմակերպության գործարար բնութագրին.
- 6) ՇՄՆԶԿ-ի հաշիվներով կասկածելի կամ անսովոր մեծ գումարների շրջանառությունը, բարդ կամ արտասովոր պայմաններով գործարքների իրականացումը.
- 7) ՇՄՆԶԿ-ի հաշիվների անհամաչափ օգտագործումը, մասնավորապես՝ փոքր շրջանառությունը կամ դրա իսպառ բացակայությունը, որին հաջորդում է հաշվի աննախադեպ ակտիվ օգտագործումը, կամ հակառակը.
- 8) ՇՄՆԶԿ-ի հաշիվներով հաճախորդների նույնականացման կամ գործարքների պարտադիր տեղեկացման համար սահմանված շեմին մոտ գումարներով միջոցների (այդ թվում՝ կանխիկի) մուտքագրումը և ելքագրումը.
- 9) ՇՄՆԶԿ-ի հաշիվներին տարբեր երկրներից և բազմաթիվ ֆիզիկական ու իրավաբանական անձանցից (այդ թվում՝ այլ ՇՄՆԶԿ-երից) տարաբնույթ նպատակներով միջոցների ստացումը.
- 10) Ոչ ռեզիդենտ հիմնադիրներ ունեցող ՇՄՆԶԿ-ի կողմից միջոցների տրամադրումը ոչ ռեզիդենտ շահառուներին,
- 11) ՇՄՆԶԿ-ների կողմից մեծ թվով բանկային հաշիվների (այդ թվում՝ օտարերկրյա ֆինանսական հաստատություններում) օգտագործումը: